ւորութեան, Երիտասարդները տխուր հայեացքով միմեանց նայեցին . . . .։

—Ընկերներ, բացագանչեց նա, որ խօսում էր ծերունու հետ, փորձենք մեր ույժերը. դու Ադոլֆ առ նրա ջութակը ու նուագակցիր Գուստաւին. ես էլ կհաւաքեմ ինչ որ կը տան։

Ասելն ու անելն մէկ եղաւ. օձիքները բարձրացրին, մազերը թափեցին աչքերին, գլխարկները ծռեցին՝ «գէհ, սկսենք մեր գործը՝ ոգևորուեցէք և յափշտակուեցէք։ Այս օր նախատօնակ է, Տէրը պէտք է մօտ լինի. Նրանից է հարկաւոր ստանալ առաջին մրցանակը. Ուրեմն, Ադոլֆ, սկսիր, որ լսողներ ժողովես»։

Երիտասարդի ճարպիկ մատների տակ ծերունու ջութակը ուրախալի կլկլաց և Carnaval de Venise-ի մեղեդիները հնչեցին հրաշալի, աննման գեղեցկութեամբ։ Շրջակայ պատուհանները բացւում էին, անցնողները կանգ էին առնում, արծաթ փողերը թափւում էին չորս կողմից՝ ջութակը լռեց։

—Քո հերթն է, Գուստաւ, հրամայեց Շառլը. և իսկոյն լսուեց երիտասարդ տէնորի գիլ և հիանալի ձայնը . . . . լսողները զմայլած, ոգևորութեամբ ծափահարում էին, ամենքը կանչում էին bis, bis, bis !

Ամբոխը մեծանում էր, փողը շատանում . . . . Տեսնելով այդ յաջողութիւնը բարի գործի ձեռներեցը առաջարկեց՝ «ընկերներ, վերջաբանի տեղ կատարենք trio «Վիլհէլմ Տէլից»։ Դու, Ադոլֆ, կառնես բասի բաժինը, ես կկատարեմ բարիտօնի, իսկ դու Գուստաւ, իմ հրաշալի տէնոր, դու էլ մի փոքր քո երկնային ձայներն հնչեցրու, այն ժամանակ մեռածներն էլ կը կենդանանան»։ Սկսեցին trio-և, մինչև այդ ժամանակ անշարժ կանգնած, ծերունին չը կարողացաւ այլ ևս համբերել և բարձրացնելով իւր փայտը սկսեց այնպիսի մի ճարպիկութեամբ, յափշտակութեամբ կառավարել, որ ամբոխը արդէն առատ առատ վարձատրում էր նրան և փողով և գովասանքներով։ Դրամները թռչում էին բոլոր պատուհաններից և գրպաններից և Շառլը դժուարանում էր այդ բոլորը ծերունու գլխարկի մէջ ժողովելու։

Նուագահանդէսը վերջացաւ. ժողովուրդը սկըսեց ցրուիլ քաղցր տպաւորութեան տակ՝ ուրախ—ուրախ կատակներ անելով։ Երիտասարդները շրջապատեցին ծերունուն. Իսկ նա ուրախութիւնից հազիւ կարողանում էր խօսել, չհաւատալով իւր տեսած ու լսածին։

—Ձեր անունները ասացէք ինձ, ձեր անուները—ազնիւ, մեծահոգի երիտասարդներ

—Իմ անունը, ասաց մէկը—Հ ա ւ ա տ է,

—Իսկ իմը—Յ ո յ ս։

—Իսկ իմ անունը թող լինի Գ թ ո ւ թ ի ւ ն, ասաց երրորդը գլխարկը վերադարձնելով ծերունուն։

Իմացէք, գոնէ նրա անունը, որին դուք այդպէս ազնիւ կերպով օգնեցիք, ես Շօպպէրն եմ, Էլզասից. տասը տարի երաժշտական խմբի կառավարիչ եմ եղել ես Ստրասբուրգում։ «Վիլհէլմ Տէլի» առաջին ներկայացման ժամանակ նուագախմբի կառավարիչը ես էի. Անբաղդութիւնը, չքաւորութիւնը ինձ հալածում են հէնց այն օրից, երբ ես թողի հայրենիքս. Այժմ ձեր տաղանդի շնորհիւ ես միջոց կունենամ վերադառնալ իմ ծննդավայրը, և գուցէ հայրենի օդը կառողջացնէ աղջկանս։ Իսկ ձեր տաղանդն ու շնորհը անհետ չեն կորչիլ՝ դուք կհռչակուիք և երևելի մարդիկ կը դառնաք։ Ես այդ զգում եմ և գուշակում։

—Տա՛յ Աստուած, ասացին երիտասարդները և հեռացան։

Շօպպէրի գուշակութիւնը կատարուեց, նրանք երեքն էլ հռչակուեցին և իրանց տաղանդի շնորհիւ անմահացան։ Տէնորը—հռչակաւոր Գուստաւ Ռօժէն էր, ջութակահարը—Ադոլֆ Հէրմանը, իսկ ձեռներէցը—«Ֆաուստ» օպերայի հեղինակը Շառլ Գունոն։

(Լափոնտէնից)

Մ. Բ.

## ՄԱՆՐԱԼՈՒՐՔ.

*Պետական խորհրդի մի որոշումը.*—Հոկտեմբերի 15-ին Պետական խորհրդում քննուել է լուսաւորութեան նախարարի առաջարկութիւնը՝ նախակրթական (начальное) դպրոցների ուսուցչի եւ ուսուցչուհու իրաւունք ձեռք բերելու յատուկ քննութիւնների մասին: Եղած օրէնսդրութեամբ (уст. служб. прав. ст. 155 прил.) որոշուած է. ա. քաղաքային նախակրթական ուսումնարանի ուսուցչի կոչում. բ. գիւղական նախակրթական ուսումնարանի ուսուցչի կոչում եւ գ. մասնաւոր նախակրթական ուսուցչի եւ ուսուցչուհու կոչում: Քաղաքային նախակրթական ուսումնարանի ուսուցչի կոչում ձեռք բերել ցանկացողից պահանջւում է գաւառական (уѣздное) ուսումնարանի դասընթացի քննութիւն, իսկ գիւղական նախակրթական ուսումնարանի ուսուցչի, ինչպէս եւ նախակրթական ուսուցչի եւ ուսուցչուհու իրաւունք ձեռք բերելու համար պահանջւում է նախակրթական ժողովրդական դպրոցի դասընթացի քննութիւն: Այժմ լուսաւորութեան մինիստրն առաջարկում է վերոյիշեալ երեք կոչումները միացնել եւ կոչել նախակրթական դպրոցի ուսուցիչ եւ ուսուցչուհի, իսկ այդպիսի կոչում ձեռք բերելու համար պէտք է ցանկացողը գաւառական ուսումնարանի դասընթացի քննութիւն տայ, որով իրաւունք կստանայ նաեւ մասնաւոր դասեր տալու տներում:

Այդ առաջարկութեան նպատակն է տարրական ուսում-

նարանի ուսուցիչների կրթական ցենզը բարձրացնել։ Լուսաւորութեան մինիստրութեան յայտարարելով ուսուցչական սեմինարներն ու աղջկերանց ուսումնարանները բաւարար թուով դասատուներ են պատրաստում նախակրթական դըպրոցների համար, ուստի եւ առաջարկուած նոր եղանակը դըժուարութիւններ չպիտի յարուցանէ քաղաքային եւ գիւղական նախակրթական դպրոցներում ուսուցիչներ նշանակելու գործի առաջ։ Միեւնոյն ժամանակ հնարաւոր պիտի լինի թէ՛ տարրական դպրոցների եւ թէ՛ եկեղեցական-ծխական միջնակարգ ուսումնարանների ուսուցչի իրաւունք տալու համար միակերպ քննութիւն նշանակել։

Պետական խորհուրդը լիովին համակարծիք լինելով այս առաջարկութեան՝ հաստատեց լուսաւորութեան մինիստրի այդ առաջարկը։

---

Ա շ ա կ ե ր տ ա կ ա ն   ն ա խ ա ճ ա շ. — Աշակերտները շատ անգամ դասից շուշանալու համար, սոված փորով են գալիս ուսումնարան, իսկ նախաճաշի համար հետները բերում են կամ մի կտոր չոր հաց եւ կամ մի քանի կոպէկ փող։ Հետեւանքը պարզ է. ցամաք հացը, մանաւանդ երբ առաւօտեան աշակերտը սոված է լինում, բաւականութիւն չէ տալիս նրան, իսկ մի քանի կոպէկը մեծ մասամբ ծախսուում է այնպիսի բաների վերայ, որոնք աշակերտի քիմքն են քաղցրացնում միայն, իսկ սնունդ չեն տալիս։ Բնական է, որ այս հանգամանքը ազդում է աշակերտի մարմնակազմի վերայ եւ թուլացնում մտաւոր կարողութիւնը։ Այս վնասակար հանգամանքի վրայ Եւրոպայում շատ շուտ են ուշադրութիւն դարձրել եւ դրա առաջն առնելու համար ուսումնարաններում պատրաստում են նախաճաշ, որ եւ բոլորովին մատչելի գնով մատակարարում են աշակերտներին։ Մինչեւ անգամ Ճողանդիայում ժողովրդական ուսումնարաններին կից բաց են անում նաեւ խոհարարական բաժին, ուր պարապմունքը աղջկերանց համար պարտադիր է, իսկ տղերանց համար՝ կամաւոր։ Հէնց այդտեղ էլ պատրաստում են, ի միջի այլոց, աշակերտների նախաճաշը։

Թէեւ Ռուսիայում դեռ ժողովրդական ուսումնարաններին կից խոհարարական բաժին բաց անելու փորձ եղած չէ մինչեւ օրս, բայց աշակերտներին առողջ եւ էժան նախաճաշ տալու փորձեր կան։ Պետերբուրգի քաղաքային խորհուրդը որոշել է իւր ծեռքին եղած ուսումնարանների աշակերտներին նախաճաշ տալ։ Միեւնոյն նպատակով մի քանի առողջարաններ միացած խնդրամատոյց են եղել, որ իրենց թոյլ տրուի Պետերբուրգի բոլոր ուսումնարաններին նախաճաշ մատակարարել (կաթ, միս, ձու եւ այլն)՝ ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատած շատ չափաւոր գներով. նրանք միայն խնդրում են, որ իրենց առանձին սենեակ տան նախաճաշը պատրաստելու համար։

Պէտք է ասել, որ Ռուսիայում արդէն քանի տարի է գործադրուում է գիմնազիոնների աշակերտներին նախաճաշ տալու սովորութիւնը, բայց դրա համար նշանակուած վարձը — 50 60 ռուբլի բաւական մեծ է։

Որքան մեզ յայտնի է, մեր դպրոցներում դեռ այդպիսի բան չկայ, թէեւ, որքան լսել ենք, մի քանի տեղ փորձեր եղել են։ Ս. Էջմիածնի ճեմարանն է միայն, որ իւր երթեւեկ աշակերտներին ձրիաբար նախաճաշ է տալիս։

---

Բ ո ւ լ ղ ա ր ի ա յ ի   ո ւ ս ո ւ մ ն ա ր ա ն ն ե ր ը.—Բուլղարական ազգը ազատութիւն ձեռք բերելուց յետոյ առանձին խնամքով աւելացնում է իւր ուսումնարանների թիւը։ Երկրի ժողովրդի թիւը $3^1/_2$ միլիոն էհաշուում, բայց ունի 4200 ժողովրդական դպրոց, 3 գիմնազիոն, 7 ռէալական ուսումնարան, 11 աղջկերանց գիմնազիոն, 1 բարձրագոյն ուսումնարան, մէկ առեւտրական ճեմարան, մի-մի հատ զինեգործական, մանկավարժական, պտղաբուծարանական եւ 2 հատ գիւղատնտեսական ուսումնարան։ Աշակերտների թիւը օր օրի վրայ աւելանում է. միայն Փիլոպպոպոլի 2 գիմնազիոններում 1430 աշակերտ կայ։

---

Ամերիկայի Միացեալ Նահանգների կրթութեան մասին Scientific American ամսագիրը հետեւեալ տեղեկութիւններն է տալիս, որ կազմուած են պաշտօնական զեկուցումների հիման վերայ.

Աշակերտների թիւը եղել է

| | 1891 թ. | | 1894 թ. |
|---|---|---|---|
| Տարրական ուսումնարան. | 14,146,653. | — | 15,416,000 |
| Միջնակարգ ուսումնարան. | 370,435. | — | 408.000 |
| Բարձրագոյն ուսումնարան, | 151,941. | — | 176,000 մի եւ |

Ուսումը շարունակում է 10 ամիս սեպտեմբ. 1-ից մինչեւ յուլիսի 1-ը, շաբաթական հինգ օր պարապելով. այսինքն ընդամենը 200 օր տարէնը։

Պետական ուսումնարաններում մանկավարժական խումբը կազմուած է 381 հազար հոգուց, սրանցից միայն մի քառորդը տղամարդիկ են եղել։ Ամսական ռոճիկը միջին թուով հասնում է 225 ֆրանկ (մօտաւորապէս 110 ռուբ.) տղամարդկանց համար եւ 185 ֆրանկ կանանց։ Մասնաւոր ուսումնարանների ուսուցիչների թիւը 60 հազարի մօտ է եղել։

Միացեալ նահանգներում 34 պետական ուսումնարան կայ կոյրերի եւ 48 խուլ եւ համրների համար։

---

Մ ա ն ո ւ կ ն ե ր ի   ֆ ի զ ի ք ա կ ա ն   կ ր թ ո ւ թ ի ւ ն ը — Քաղաքային ուսումնարաններում սովորաբար աշակերտները աւելի վատառողջ են լինում, քան թէ գիւղական ուսումնարաններում։ Պատճառը շատ պարզ է. մինչ քաղաքացի մանուկը թէ մինչեւ ուսումնարան մտնելը եւ թէ ուսումնարանում զրկուած է ազատ եւ մաքուր օդում խաղալու, ժամանակ անցկացնելու հնարաւորութիւնից, գիւղական մանուկն այդ կողմից բոլորովին ազատ է եւ շատ յարմարութիւններ ունի։ Քաղաքացի մանուկներին եւս ազատ եւ մաքուր օդում, գոնէ մասամբ, խաղալու հնարաւորութիւն տալու նպատակով մեծ քաղաքներում ընկերութիւններ են հիմնուած որոնց թիւը տարէց տարի աւելանում է։ Այնպիսի մի ընկերութիւն կայ եւ Ս. Պետերբուրգում։

Մանուկների ֆիզիքական կրթութեան նպաստող Պետերբուրգի ընկերութիւնն այդ նպատակով 1894 թուի ամառը շաբաթական երկու անգամ Ալէքսանդրեան այգում մանկական խաղեր էր կազմում։ Թէ որքան մանուկները սիրով յաճախում են այդ այգին, երեւում է նրանից, որ մինչեւ օգոստոսի մէկը խաղերին մասնակցել է 2000-ից աւելի մանուկ։ Բացի դրանցից ընկերութիւնը մի քանի անգամ զբօսանքի է տարել մանուկներին քաղաքի շրջակայքը։

Միեւնոյն նպատակով Խարկովի քաղաքային խորհուրդը որոշել է 24 դեսիատին տեղի վրայ մի պարտէզ տնկել, որի նախագիծը կազմելու համար երկու մրցանակ է նշանակուած 300 եւ 150 րուբլի, իսկ պարտէզ տնկելու համար էլ որոշուած է 15,000 րուբլի։

Սեւաստապոլի հասարակական այգում էլ մանուկների համար յատուկ մի բաժին կայ՝ մանկական խաղերի եւ մարմնամարզութեան համար կարեւոր գործիներով ու յարմարութիւններով։

*